

# Թալին – Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 71+500 կմ ից մինչև 90+200 կմ (Թալին-Լանջիկ հատված)

Վերջնաժամկետ: 14.09.2015

## Հայտ ներկայացնելու հրավեր

<b>Ամսաթիվ</b>	27 հուլիսի 2015թ.
<b>Վարկի համարը</b>	2993-ARM
<b>Ծրագիր</b>	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3
<b>Պայմանագրի</b>	Թալին – Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 71+500 կմ ից մինչև 90+200 կմ (Թալին-Լանջիկ հատված)
<b>Պայմանագրի համարը</b>	T3-CW-01
<b>Հայտերի ներկայացման վերջնաժամկետը</b>	14 սեպտեմբեր 2015թ.

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Ծրագիր 3) համար, և մտադիր է օգտագործել այդ վարկի մի մասը վերոնշյալ պայմանագրի ներքո վճարումները կատարելու համար: Միջազգային մրցույթը (ICB) բաց է ԱԶԲ-ի իրավասու երկրների բոլոր հայտատուների համար:

2. Այժմ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ Գործատու) հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնելու մրցութային փաստաթղթերով փակ ծրարներ հետևյալ աշխատանքների համար.

Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 71+500 կմ ից մինչև 90+200 կմ (Թալին-Լանջիկ հատված). երկու գոտի և մեկ երթևեկելի ուղի ունեցող Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի բարելավում և լայնացում՝ վերակառուցելով այն չորս գոտիով և երկու երթևեկելի ուղիով ավտոմայրուղու (այսուհետ՝ աշխատանքներ):

Բարելավվող և լայնացվող ճանապարհի ընդհանուր երկարությունը 18.700 կմ է, որը ներառում է չորս երթևեկության գոտիով նոր ավտոմայրուղու կառուցում ցեմենտ բետոնե պատվածքով Թալին-Լանջիկ հատվածում: Մոտավորապես 7.150 կմ պետք է կառուցվի նոր ծրագծով՝ անհրաժեշտ գործող չափանիշներին համապատասխանելու համար, հատկապես՝ Մաստարայի զառիթափ հատվածում: Որտեղ այն կշարունակի գոյություն ունեցող ծրագիծը, երկրորդ երթևեկելի մասը հիմնականում պետք է կառուցվի գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ:

Ընդհանուր առմամբ կկառուցվեն 2 նոր տարբեր մակարդակների վրա գտնվող փոխհատումներ, որոնք երկուսն էլ ուղեանցեր են: Բոլոր ուղեանցերի համար նախատեսված են ստանդարտ 18մ երկարությամբ նորմալ ամրանավորված հեծաններ՝ սովորական երկաթբետոնե կամրջային պաստառներով: Բացի փոխհատումներից, կկառուցվեն T-աձև հատումներ՝ ապահովելով կապ տեղի ճանապարհների/համայնքների հետ: Այլ

երկաթբետոնե կառուցվածքները ներառում են գյուղատնտեսական ուղեանցեր/ստորգետնյա անցումներ՝ գյուղատնտեսական մեխանիզմների, հետիոտների և կենդանիների համար, նաև ստորգետնյա գյուղատնտեսական անցումներ՝ կենդանիների և հետիոտների համար, կամուրջ և խողովակներ մակերեսային ջրերի ու ոռոգման համակարգերի համար: Ճանապարհածածկի շինարարությունը ներառում է 35 սմ հատիկավոր շերտ, 18 սմ հատիկավոր ենթահիմք, խճաքարի 2 հիմնային շերտ՝ յուրաքանչյուրը 18 սմ (ընդհանուր 36 սմ խճաքարի հիմնային շերտ) , և 24 սմ ցեմենտ-բետոնե ծածկ: Կողնակներն ու բաժանիչ գոտին պետք է ենթարկվեն կրկնակի բիտումային կապակցանյութով մակերեսային մշակման: Մուտքերի, արագացման/դանդաղեցման գոտիների պատվածքը լինելու է ասֆալտ-բետոնից: Ծրագրային ճանապարհը գտնվում է ՀՀ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք, ծովի մակարդակից 1400-ից 1900 մ բարձրության վրա:

3. Ավարտման համար ժամանակահատվածը 540 օր է:

4. Միջազգային մրցույթը (ICB) կիրականացվի մեկ-փուլ երկու-ծրար մրցութային ընթացակարգի համաձայն և բաց է ԱԶԲ-ի իրավասու երկրների բոլոր հայտատուների համար:

5. Հայտատուները պետք է ունենան հետևյալ հիմնական որակավորումները .

- Բոլոր ընթացիկ դատավարությունները, եթե կան այդպիսիք, կդիտարկվեն որպես լուծված Հայտատուի դեմ և դրանք չպետք է գերազանցեն Հայտատուի զուտ ակտիվների արժեքի (հաշվարկված որպես ընդհանուր ակտիվների և պարտավորությունների տարբերություն) ավելի, քան 50%-ը:
- Նվազագույնը տարեկան հիսուներեք միլիոն (53,000,000) ԱՄՆ դոլար շինարարության միջին շրջանառություն՝ հաշվարկված որպես վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում գործող և ավարտված պայմանագրերի դիմաց ընդհանուր հաստատված վճարումներ:
- Վերջին 10 տարիների ընթացքում նվազագույնը մեկ պայմանագրում մասնակցություն, որը հաջողությամբ ավարտվել է և որով առաջարկվել են նման աշխատանքներ, ընդ որում՝ հայտատուի մասնակցության արժեքը գերազանցում է երեսուներկու միլիոն (32,000,000) ԱՄՆ դոլարը:
- Հայտատուն պետք է ունենա շինարարական աշխատանքների փորձ հետևյալ հիմնական գործառնությունների գծով՝
  - ա) 140,000 մետր խորանարդ ժայռային հանույթ վերջին 10 տարիներից որևէ տարվա ընթացքում
  - բ) 80,000 մետր խորանարդ ցեմենտ բետոնե ծածկի իրականացում վերջին 10 տարիներից որևէ տարվա ընթացքում
  - գ) 1,400,000 մետր խորանարդ լիցքի իրականացում վերջին 10 տարիներից որևէ տարվա ընթացքում

6. Մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու և/կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար հայտատուները կարող են դիմել՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ  
 Հասցե՝ Պուշկին 58  
 ք. Երևան  
 Փաստային ինդեքս: 0002  
 Երկիր՝ Հայաստանի հանրապետություն  
 Հեռ. /+374 60 50 68 70  
 Էլեկտրոնային հասցե՝ info@northsouth.am

7. Մրցութային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը (ներառյալ՝ գծագրերը, նախագծի մասնագրերը և ծավալի ամփոփագրերը) անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից (Շահառու) սկսած 2015թ հուլիսի 27-ից: Մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն աշխատանքային ժամերի ընթացքում՝ ժամը 9:00-ից մինչև 17:00, ստորև նշված հասցեով գրավոր դիմումի ներկայացման դեպքում և վճարելով չփոխհատուցվող գումար՝ 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլարի կամ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, և այդ վճարման հանձնարարագիրը: Վճարումը պետք է կատարվի յուրաքանչյուր Պայմանագրի փաստաթղթերի համար: Վճարման եղանակը՝ բանկային փոխանցում Շահառուի հետևյալ բանկային հաշվին:

ՀՀ դրամով փոխանցումների համար Հայաստանի ներսում	Հայաստանից դուրս ԱՄՆ դոլարով փոխանցումների համար
Բանկ՝ Արարատբանկ, ԲԲԸ, Հասցե՝ ՀՀ, Երևան, Պուշկին փ. 19 Շահառուի հաշիվը՝ 151 000 901 786 03 00 Շահառու՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ ՀՎՀՀ՝ 027 089 21 Երևան, Նալբանդյան 28	Թղթակից բանկ: Standard Chartered Bank, New York, USA, Addr: One Madison Avenue, New York, N.Y.10010-3603, SWIFT: SCBLUS33. Routing No 026002561  Շահառուի բանկ: Արարատբանկ, ԲԲԸ , Հասցե: Պուշկինի փողոց 19, Երևան, ՀՀ; SWIFT: ARMCAM22; Account no: 358 202 357 10 01 Շահառու: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ; Account no: 151 000 901 786 03 01 Կամ Թղթակից բանկ: CitiBank N.A., 111 Wall Street, New York, NY, 10043, SWIFT: CITIUS33

	<p>Շահառուի բանկ:</p> <p>Արարատբանկ, ԲԲԸ ,  Հասցե: Պուշկինի փողոց 19, Երևան, ՀՀ  SWIFT: ARMCAM22; Account no: 362 547 74</p> <p>Շահառու:  «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ;  Account no: 151 000 901 786 03 01</p> <p>կամ</p> <p>Թիթթակից Բանկ :  Raiffeisen Zentralbank Oesterreich AG, SWIFT: RZBAATWW</p> <p>Շահառուի Բանկ:  Արարատբանկ, ԲԲԸ ,  Հասցե: Պուշկինի փողոց 19, Երևան, ՀՀ;  SWIFT: ARMCAM22; Account no: 070-55.076.558 USD</p> <p>Շահառու:  «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ SNCO; Account no: 151 000 901 786 03 01</p>
--	--

8. Գործատուն պատասխանատու չէ հայտատուի կողմից հայտի պատրաստման կամ ներկայացման համար կատարված ծախսերի համար:

9. Նախամրցութային կոնֆերանսը տեղի կունենա 24 օգոստոս 2015թ.-ին ժամը 15:00 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հանդիպումների սենյակում: Գործատուն 25 օգոստոս 2015թ. կկազմակերպի շինհրապարակի այցելություն: Գործատուն առաջարկում է մրցութային փաստաթղթեր ձեռք բերած բոլոր պոտենցիալ հայտատուներին մասնակցել նախամրցութային կոնֆերանսին:

10. Հայտերը պետք է ներկայացնել մինչև կամ 14 սեպտեմբեր 2015թ. ժամը 15:00-ին (Երևանի ժամանակով) վերոնշյալ հասցեով հայտի ապահովման գնի հետ միասին, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթերում:

11. Ուշացված հայտերը կմերժվեն: հայտերը կբացվեն անմիջապես վերջնաժամկետից հետո Հայտատուների ներկայությամբ, ովքեր նախընտրել են մասնակցել հայտերի բացմանը հետևյալ հասցեով՝  
Հանդիպումների սենյակ, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային

ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

Հասցե՝ Պուշկինի 58

Քաղաք՝ Երևան

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Էլեկտրոնային հասցե՝ info@northsouth.am

Հայտ ներկայացնելու հրավերը հրապարակվել է նաև ԱԶԲ-ի կողմից և այն կարող եք գտնել

հետևյալ հղումով՝ <http://www.adb.org/site/business-opportunities/operational-procurement/goods-services/notices-current>